13/32

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

« 03 » 10 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0146-22

Ձեռնարկողը՝ **Քաղաքացի Գրիգոր Տիգրանյան**
ք. Երևան, Վերին Անտառային փ., 136/2 տուն

Գործունեությունը՝ **Կենտրոն վարչական շրջանի Վերին Անտառային փողոց 136/2 բնակելի տուն, 136/7 բնակելի տներ, 136/8 բնակելի տուն, 136/9 ձեղնահարկ և 136/10 հասցեներում նախատեսվող բնակելի շենքերի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0146-22

<03> 10 2022թ.

Երևանի Կենտրոն վարչական շրջանի, Վերին Անտառային փողոց, 136/2 բնակելի տուն, 136/7 բնակելի տներ, 136/8 բնակելի տուն, 136/9 ձեղնահարկ և 136/10 հասցեներում նախատեսվող բնակելի շենքերի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	Քաղաքացի Գրիգոր Տիգրանյան
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան

Ներածական մաս. Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքը նախատեսվում է կառուցել Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանում՝ Վերին Անտառային փողոց 136/2 բնակելի տուն, հ.136/7 բնակելի տներ, հ.136/8 բնակելի տուն, հ. 136/9 ձեղնահարկ և հ. 136/10 հասցեներում:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Ընդհանուր տարածքը կազմում է 3976.5քմ:

Նախատեսվող գործնեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7)-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:

Նկարագրական մաս. Բազմաֆունկցիոնալ 5 հարկանի բնակելի շենքը հատակագծում ո-աձև է, մեկ թևի առանցքային եզրաչափերն են՝ 30,8*25մ, մյուսինը 36,7*22.3մ: Շենքն ունի 1 կիսանկուղային և 3 ստորգետնյա հարկ: Ստորգետնյա հարկերը ծառայում են որպես ավտոկայանատեղիներ, որոնց քանակը նախատեսված է 171 հատ: Ստորգետնյա հարկերի առանցքային եզրաչափերն են՝ մեկ թևինը 35,8*25մ, մյուս թևինը 41,7*22,3մ: Կիսանկուղային հարկի հարավային կողմը նախատեսված է հասարակական տարածքների համար, որոնք կարող են ծառայել, թե որպես օֆիսային և թե առևտրական օբյետներ: Հարկի մնացած մասը բնակելի նշանակություն ունի:

Կառույցի ծավալատարածական հորինվածքը լինելով հատակագծում ո-աձև՝ բացված թևերով շենք, առաջին երկու հարկերում բաժանված է անցումով, որտեղից էլ կազմակերպվում է մուտքը դեպի բնակարաններ: Բնակարանների քանակը, 145 է: Առաջին 4 հարկերում տեղակայված են մակերեսով փոքր բնակարաններ, իսկ վերջին 2 հարկում մեծ մակերեսով բնակարաններ:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ "ENVIRONMENTAL EVALUATION AND EXPERTISE CENTER" STATE NON-PROFIT ORGANIZATION
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Շենքի տանիքում հետ նահանջով տեղակայված է տեխնիկական հարկ՝ 26,3*12մ առանցքային չափերով, որտեղ գտնվում են շենքի կաթսայատունը, օդափոխության համար նախատեսված սարքերը և գեներատորը: Շենքի հիմնակմախքը, ինչպես նաև հարկերի միջև ծածկերն ամբողջությամբ իրականացվում է ե/բ-ով: Արտաքին պատերը և աստիճանավանդակների պատերը սնամեջ բլոկից են՝ ինչն ապահովում է շենքի կայունությունն ու կրող կոնստրուկցիաների ամրությունը, մարդկանց էվակուացիայի և հրդեհի վնասը պակասեցնելու համար անհրաժեշտ գործողությունների ժամանակ: Ավտոկայանատեղի և կիսանկուղային հարկերի միջև ծածկի սալն առաջին կարգի է: Առաջին կարգի ծածկի սալ է նախատեսված նաև տանիքում՝ վերջին բնակելի և տնտեսական հարկերի միջև: Տնտեսական հարկն ունի մետաղական ուղղաձիգ աստճաններ դեպի տանիք:

Աստիճանավանդակների դռները նախատեսված են հակահրդեհային, իսկ վերելակների հորաններում նախատեսված են օդի դիմհարներ: Շինության ջեռուցման, հովացման պահանջն ապահովելու համար նախատեսված է «Չիլլեր-Կաթսա-Ֆանկոյլ» երկխողովականի համակարգ: Կաթսայատունը նախատեսվում է ունենալ +19.80 նիշում: Կաթսայատան ընդհանուր հզորությունը 910կՎտ է, որը կոմպենսացնելու համար նախատեսված է պատին ամրացվող կոնդենսացիոն կաթսաներ 6 հատ՝ յուրաքանչյուրը 180կՎտ հզորությամբ: Հովացման պահանջն ապահովելու համար նախատեսված է կաթսայատանը կից տեղադրել երկու հատ չիլլեր՝ գումարային 600կՎտ հզորությամբ: Բնակելի հարկերի միջանցքներում նախատեսված է ջերմաբաշխիչ հանգույց, որտեղ ըստ նախագծի լինելու է ջերմային հաշվիչները ամեն բնակարանի համար, հաշվեկշռային փականները էլ. շարժաբերով: Հասարակական հարկերի ջերմասառնամատակարարման կանգնակը նախատեսվում է բնակելի հատվածից անջատ առանձին կանգնակներով: Տարածքի բարեկարգումը հիմնականում իրականացվելու է կանաչապատման համար նախատեսված պլաստիկ ցանցով /գեոցանց/, որը թույլ է տալիս խոտածածկի վրա ծանր մեքենաների անց ու դարձը: Տեղ տեղ բետոնը սալիկապատ է, տեղ տեղ էլ պարզ կանաչապատ: Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերին հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ նախատեսվել են թեքահարթակներ:

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի տեխնիկական ցուցանիշներ են.

- հողամասի մակերես կազմում է- 3976.5քմ,
- կառուցապատման մակերես – 1625քմ,
- ստորգետնյա հարկի մակերես – 2288.6քմ,
- կանաչապատման մակերես – 1600քմ,
- մայթ և ճանապարհ – 751.5 քմ,
- բնակարանների քանակ՝ 145,
- ստորգետնյա կայանատեղիների քանակ՝ 171:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

Ջեռուցումը և օդափոխությունը ողջ համալիրում կատարվելու է անհատական լուծմամբ օդորակիչների և ջեռուցման կաթսաների միջոցով: Նախատեսված է օդափոխության

02543163
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

արհեստական համակարգ ավտոկայանատեղից: Արտածումը կատարվում է արտածման համակարգերի միջոցով: Օդահեռացումը կատարվում է երկու զոնաներից՝ վերևի և ներքևի: Հարկավոր է նախատեսել CO գազի բաղադրությունը չափող ցուցիչ, որի ազդանշանի դեպքում կաշխատի արտածման օդամուղը: Ներածման համակարգերի միջոցով ապահովվում է մաքուր օդի մուտք ավտոկայանատեղերին: Բնակարանների սան.հանգույցներից և խոհանոցներից օդի արտածումը բնական է: Բոլոր սան. հանգույցների հորանների վրա վերևում նախատեսվում են դեֆլեկտորներ:

Շենքերի էներգաարդյունավետության մակարդակը գնահատելու համար՝ նախատեսված է օդափոխվող ֆասադային համակարգ /вент-фасад/, որը ներառում է ջերմամեկուսիչ շերտի առկայությունը, երեսպատվող քարերի համար լրացուցիչ կոնստրուկտիվ համակարգ, անկեռներով ամրացված արտաքին պատի մակերևույթին: Արտաքին պատի արտաքին կողմից ամրացվող ջերմամեկուսիչ շերտի՝ 100մմ հաստությամբ հանքային բամբակի սալիկներն ապահովում են արտաքին պատերի ջերմային դիմադրության նորմատիվային պահանջները: Շենքերի տանիքները նախատեսված է հարթ, չշահագործվող: Տանիքի համար նախատեսված շերտերը նույնպես հաշվարկված են բարձր ջերմային դիմադրության համար, որը բարձրացնում է շենքերի էներգաարդյունավետությունը:

Շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 30 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորումն ու տեղադրումը,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու:

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 100 մարդ, որից ինժիներատեխնիկական անձնակազմ - 8 մարդ

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է ամսեկան մեկ մարդու հաշվարկով 6 կգ 100x6x30/1000= 18տ և շինարարական աղբն է մոտ 2300 խմ ծավալով, այդ թվում տարածքում առկա շինությունների քանդումից առաջացող: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

Բազմաբնակարան բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <Վեոլիա Ջուր> ՓԲԸ ցանցին, որի համար սահմանված կարգով ստացվել է տեխնիկական պայման և լիցենզավորված կազմակերպության կողմից իրականացվելու է նախագիծ: Ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել, տարածքի հարևանությամբ անցնող d=200մմ ջրագծից, կոյուղին՝ տարածքով անցնող d=900մմ կոյուղատարը շրջանցելուց հետո շրջանցվող կոյուղատարին, իսկ հեղեղատարը՝ Սարալանջի փողոցով անցնող d=400մմ հեղեղատարին: Շինարարության փուլում ջրցանման համար ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում բնակելի շենքի էլեկտրամատակարարումը հնարավոր կլինի իրականացնել՝ ՏԵ7701-ի I, II 0.4 կՎ վահանից: Բնակելի համալիրի գազաֆիկացումը P=0.3 ՄՊա ճնշման և Q=460 խմ/ժամ նախատեսվող ծախսով հնարավոր է իրականացնել ԳԲԿ Երևան -1 սնող Dպ-700 կողմնատար – գազատարից:

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքիերի տեղադրման համար կատարվելու է մոտ 24000 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր: Հանվող 19200խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Տարածքում առկա է քանդման ենթակա շենք-շինություններ: Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 18տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր և մոտ 2300 խմ շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/, այդ թվում տարածքում առկա արտադրական և օժանդակ շինությունների քանդումից առաջացող աղբը, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ Էրեբունի վարչական շրջանի նուբարաշենի տարածք:

Տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ:

Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ: Բնութագրվող տարածքը չի

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
02543103
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE

գտնվում պահպանվող գոտում, տարածքում և տարածքի մերձակայքում բացակայում են պատմամշակութային հուշարձանները:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:
- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա:
-Շինարարական գործընթացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:
- Աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր:
- Հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում:
- Շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին:
- Շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- Պարբերաար ստուգել և կարգավորել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները:
- Շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ:
- Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
- Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

- Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1 900 000 դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, ինչպես նաև քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Անհրաժեշտ է հայտում նշված հողամասի առնվազն 40.03%-ն ապահովել որպես կանաչապատման տարածք:

Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու լիցքավորումն անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չպահեստավորել:

- Կառուցապատման աշխատանքների ժամանակ՝ ՀՀ Օրենսդրությամբ նախատեսված

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

կարգով պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:

-Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակն անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով, մարդկանց անցման հատվածներում անվտանգության նկատառումներով պայմանավորված նախատեսել թիթեղյա ծածկոց:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Գրիգոր Տիգրանյան-ի կողմից ներկայացված Երևանի, Կենտրոն վարչական շրջանի, Վերին Անտառային փողոց, 136/2 բնակելի տուն, 136/7 բնակելի տներ, 136/8 բնակելի տուն, 136/9 ձեղնահարկ և 136/10 հասցեներում նախատեսվող բնակելի շենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան